ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 36-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված խանութը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 04.02.2020թ. թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի հարավային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 45.76 քմ արտաքին մակերեսով (37.8 քմ ներքին մակերեսով) հասարակական նշանակության խանութի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 3-րդ կետի խանութի զբաղեցրած հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ որպես հասարակական կառուցապատման նշանակության:
3. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի հարավային մասում գտնվող, 1999թ. ինքնակամ կառուցված, 45.76 քմ արտաքին մակերեսով խանութը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00479 հա մակերեսով հողամասով:

4. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի հարավային մասում գտնվող խանութին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 55/5 փոստային հասցե:
5. Խանութի զբաղեցրած 0.00479 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված խանութի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
7. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Տարոն Աբգարյանին, օրինականացված խանութը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 37-Ա

06-002-0104-0013 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0074 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 06-002-0097-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0344 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ կետով, 23-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Գևորգ Վարդանի Էվոյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, ժառանգության իրավունքի վկայագիրը, 09.11.1990թ. կազմված տեխնիկական անձնագիրը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Գևորգ Վարդանի Էվոյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող 0.0344 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0097-0012), 0.0074 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0104-0013), բնակավայրերի բնակելի հողամասերի հողհատկացման հիմքերը, հողօգտագործման իրավունքը:
2. Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող, 0.0344 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0097-0012) հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 5, նրբանցք 1, N 10 փոստային հասցե:
3. Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող, 0.0074 հա մակերեսով (ծածկագիր՝ 06-002-0104-0013) հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 2, N 18/4 փոստային հասցե:

4. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 38-Ա

06-002-0108-0011 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆԻ ԷՎՈՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀԱՄԱՏԵՂ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Գևորգ Վարդանի Էվոյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի և շինությունների հատակագծերը, 09.11.1990թ. կազմված տեխնիկական անձնագիրը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Գևորգ Վարդանի Էվոյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0108-0011), 1905 թվականին կառուցված բնակելի տան, ինչպես նաև կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.006345 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական

խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 1993 թվականին կառուցված նկուղը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Գևորգ Վարդանի Էվոյանի (ծնված՝ 16.12.1988թ.) սեփականությունը:

3. Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 2, բնակելի տուն N 18/3 փոստային հասցե:
4. Նշված բնակելի տան զբաղեցրած 0.006345 հա մակերեսով հողամասից 0.00422 հա մակերեսը հանդիսանում է Գևորգ Էվոյանի և Վրույր Էվոյանի համատեղ բաժնային սեփականությունը:
5. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 39-Ա

06-002-0222-0026 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Սամսոն Հակոբյանի դիմումը, ժառանգության իրավունքի վկայագիրը, անձնագրի պատճենը, 19.09.1993թ. տնտեսական N 1 գրքից քաղվածքը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Սամսոն Հակոբյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0222-0026), 0.0250 հա մակերսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը:
2. Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասում գտնվող 0.0250 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, փողոց 1, N 17 փոստային հասցե:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 40-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 39-րդ, 60-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սամսոն Հակոբյանի դիմումը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, 19.09.1993թ. հողակադաստրային N 1 գրքից, համայնքի տնտեսական գիրք N 1, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 19.10.1991թ. N 04 որոշման քաղվածքները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Սամսոն Հակոբյանին (ծնված՝ 04.03.1954թ.), Անահիտ Հակոբյանին (ծնված՝ 31.03.1957թ.), Նարինե Հակոբյանին (ծնված՝ 04.05.1978թ.), Կարինե Հակոբյանին (ծնված՝ 18.09.1979թ.), Սասուն Հակոբյանին (ծնված՝ 04.11.1980թ.), Սարբեկ Հակոբյանին (ծնված՝ 03.13.1991թ.), ժառանգության, բաժնային սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը.

1.1 06-002-0274-0002 ծածկագրի տակ գտնվող 0.9239 հա մակերեսով 3-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.2 06-002-0286-0017 ծածկագրի տակ գտնվող 0.83015 հա մակերեսով 5-րդ կարգի խոտհարքի նկատմամբ.

1.3 06-002-0287-0023 ծածկագրի տակ գտնվող 0.54052 հա մակերեսով 5-րդ կարգի խոտհարքի նկատմամբ:

2. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 41-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Ռաշիդ Գրիգորի Թամազյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N1788129 վկայականը, ժառանգության իրավունքի վկայագիրը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ռաշիդ Գրիգորի Թամազյանին, Նարինե Ռաշիդի Թամազյանին, Նաիրա Ռաշիդի Թամազյանին համասեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Աքորի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, փողոց 2, N 35 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 42-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալինա Վաղինակի Թամազյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 029212 վկայականը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը (գործ թիվ ԼՊ 2/1477/02/19), քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի քաղաքի Ջրավազան 15 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, N 27 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 13

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 43-Ա

06-002-0208-0003 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱՄՍՈՆ ՍԱՐԻԲԵԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ 0.0691 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.0017 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱՁԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Սամսոն Սարիբեկի Հակոբյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, 10.12.1984թ. տեխնիկական անձնագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***

1. Վերականգնել Սամսոն Սարիբեկի Հակոբյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամաս, N 186 հասցեում գտնվող բնակելի տան և 0.0691հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Սամսոն Սարիբեկի Հակոբյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Ակներ թաղամաս, N 186 հասցեում գտնվող բնակելի տանը,

վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, փողոց 1, N 26 փոստային հասցե:

3. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելուելու իրավունք չառաջացնող՝ 1989 թվականին կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, ծածկը, անասնագոմը, պարիսպը, կատարված ձևափոխությունները և ավել օգտագործվող սահմանազատված 0.0017 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Սամսոն Սարիբեկի Հակոբյանի (ծնված՝ 04.03.1954թ.) սեփականությունը:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. փետրվարի 13
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 44-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, 3/11 ՇԵՆՔ, N 30 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 06.04.2007թ. Հ 23-Ա որոշումը, Ալավերդու քաղաքապետի 28.06.1997թ. թիվ 102 որոշումը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ տնօրենի կողմից 10.02.2020թ. տրված N 0/40 տեղեկանքը, Սուսան Սուրիկի Անդրիասյանի դիմումը, բնակ. հանձնաժողովի 12.02.2020թ. N 1 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 3/11 շենք, N 30 բնակարանը (74.97 քմ ընդհանուր մակերեսով) 37485 դրամով, ուղղակի վաճառքով, օտարել բնակարանի վարձակալ Սուսան Սուրիկի Անդրիասյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնակարանի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 14
ք. Ալավերդի